ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆԻ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Քոլեջ

Մասնագիտություն՝ Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝
օտար լեզվի խորացած իմացությամբ

Թեմա՝ «Էկոտուրիզմը Հայաստանում»

Ուսանողուհի՝ Մարիամ Շախվերդյան
Ղեկավար՝ Տիգրան Զոհրաբյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն…… 2
Գլուխ 1
1.1 Ի՞նչ է էկոտուրիզմը …… 3
1.2 Էկոտուրիզմը աշխարհում……7
Գլուխ 2
2.1 Հայաստանի աշխարհագրական դիրքը…… 10
2.2 Էկոզբոսաշրջությունը Հայաստանում…… 11
2.3 Էկոզբոսաշրջության ուղիներ…… 18
Գլուխ 3
3.1 Գործնական աշխատանք…… 22
Եզրակացություն…… 24
Գրականության ցանկ…… 25

Ներածություն

Ի՞նչ է Էկոտուրիզմը հարցի պատասխանը ոչ բոլոր գիտեն, թեև հաճախ են կիրառում ամենատարբեր իրավիճակներում: Էկոլոգիական տուրիզմը Զբոսաշրջային ինդուստրիայի հատուկ ուղղություն է, ինչը իրենից ենթադրում է առաջին հերթին մարդ-բնություն ճիշտ փոխհարաբերությունը և դրանում առկա առարկաների և երևույթների ճանաչողությունը: Սա զբոսաշրջության տեսակ է, որը ենթադրում է ճանապարհորդություն դեպի բնության համամետաբար քիչ աղտոտված վայրերը, որտեղ ավանդական զվարճությունները և կենցաղային հարամարավետությունը մղվում են երկրորդային պլան: Էկոտուրիզմը բնության և մշակութային տեսարժան վայրերի ուսումնասիրության և ըմբռշխնելու նպատակով շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվությամբ ճանապարհորդությունն է կապված բնության չխախտված տարածքների հետ, որը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, շրջակա միջավայրի վրա ունենում է «մեղմ» ազդեցություն, ապահովում է տեղացի բնակիչների ակտիվ սոցիալ-տնտեսական մասնակցությունը և նրանց կողմից այդ գործունեությունից առավելությունների ստացումը: Էկոտուրիզմը դեպի բնական տարածքներ պատասխանատու ճանապարհորդություն է, որը նպաստում է բնության պահպանությանն ու բարելավում տեղացի բնակչության բարօրությունը:

Որպես դիպլոմային նախագծի թեմա ընտրել եմ էկոլոգիական զբոսաշրջությունը աշխարհում և Հայաստանում: Այս նյութում ներկայացնում եմ տվյալ ոլորտի տեսակները, խնդիրներն ու առանձնահատկությունները:

Դիպլոմային նախագիծը բաղկացած է երկու գլխից, գործնական աշխատանքից և եզրակացությունից:

Առաջին գլխում ուսումնասիրել և ներկայացրել ենք՝ ի՞նչ է էկոտուրիզմը, էկոտուրիզմի առաջացումը և էկոտուրիզմը աշխարհում:

Երկրորդ գլխում անդրադարձել ենք՝ էկոտուրիզմը Հայաստանում, ի՞նչ տեսակներ կան, ՀՀ ո՞ր շրջաններում են տարածված:

Գործնական աշխատանքում նկարագրել ենք մեկ ճամփորդության ընթացքում իրականացրած էկոտուրիզմի երկու տեսակ՝ քայլարշավի և թռչնադիտարկման նկարագրություն:

Գլուխ 1
Ի՞նչ է էկոտուրիզմը, էկոտուրիզմը աշխարհում

Էկոլոգիական զբոսաշրջությունը (էկոտուրիզմ, էկոզբոսաշրջություն), բնության, նրա բաղադրիչների և պատմամշակութային հուշարձանների ճանաչողության նպատակով կազմակերպվող զբոսաշրջություն է: Էկոտուրիզմ տերմինը Արևմուտքում պաշտոնապես օգտագործվել է XX դարի 80-ականների առաջին կիսամյակում կոնֆերանսներից մեկի ժամանակ մեքսիկացի էկոլոգ Հեկտոր Սեբալոս-Լասկուրայնի (իսպ.՝ Hector Ceballos-Lascurain) կողմից: Ռուսաստանում, գրեթե նույն ժամանակ, այն շրջանառության մեջ մտավ «Շուրջբայկալյան երկաթուղի» երթուղու մշակման և շահագործման ժամանակ: Մասնագիտական (ինչպես նաև ակադեմիական) շրջանակներում գոյություն ունեն էկոտուրիզմի՝ նույնատիպ իմաստով մի քանի իդեալիստական սահմանումներ.

• Էկոտուրիզմ - բնության և մշակութային տեսարժան վայրերի ուսումնասիրության և ըմբռշխնելու նպատակով շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվությամբ ճանապարհորդություն կապված բնության չխախտված տարածքների հետ, որը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, շրջակա միջավայրի վրա ունենում է «մեղմ» ազդեցություն, ապահովում է տեղացի բնակիչների ակտիվ սոցիալ-տնտեսական մասնակցությունը և նրանց կողմից այդ գործունեությունից առավելությունների ստացումը: *Բնության պահպանության միջազգային միություն*:

Էկոտուրիզմ - դեպի բնական տարածքներ պատասխանատու ճանապարհորդություն, որը նպաստում է բնության պահպանությանն ու բարելավում տեղացի բնակչության բարօրությունը: *Էկոտուրիզմի հասարակություն (The Ecotourism Society):*

• Էկոտուրիզմ - զբոսաշրջություն, որը ներառում է համեմատաբար անխախտ բնություն ունեցող վայրեր ճանապարհորդություններ տվյալ տարածքի բնական և մշակութա-էթնիկական առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով, որը չի խախտում էկոհամակարգի ամբողջականությունը և ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնց ներքո բնության ու բնական ռեսուրսների պաշտպանությունը արդյունավետ է դառնում տեղացի բնակչության համար: *Վայրի բնության համաշխարհային ֆոնդ:*

• Էկոտուրիզմի առանձնահատկություն այն է, որ կարող է կանխել բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, նաև շատ դրական է ազդում շրջակա միջավայրի և մշակույթի վրա, ինչը օգնում է զբոսաշրջության մասնագետներին և ճանապարհորդներին բնության պահպանման հարցում և մշակութային զարգացմանը:

Էկոտուրիզմի զարգացման ամենակարևոր մասնագիտական գործիքը բնական ռեսուրսների կառավարումն է: Ողջ աշխարհում կան մի քանի վայրեր, որտեղ առկա են մեծ քանակությամբ բնական ռեսուրսներ: Կառավարման պատշաճ ծրագրեր պետք է ներդրվեն, որպեսզի այդ ռեսուրսները մնան անձեռնմխելի: Մի քանի կազմակերպություններ, ՀԿ-ներ, գիտնականներ աշխատում են այս ուղղությամբ:

Էկոտուրիզմի ծագումը

Էկոտուրիզմի ծագումը, ձևավորումը և զարգացումը, այդ թվում նաև Հայաստանում, բացատրվում են նրանով, որ ժամանակի ընթացքում մեծացել է անհրաժեշտությունը շրջակա միջավայրի փոփոխությունների ուսումնասիրության և դրանք նվազագույնի հասցնելու:

Հիմնական նպատակն է զբոսաշրջիկներին տեղեկացնել տուրիստական ուղղությունը շրջապատող սոցիալական պայմաններին: Աղքատության նման պայմանները հաճախ թաքցվում են զբոսաշրջիկներից, քանի որ բոլոր երկրներում զբոսաշրջային վայրերում կազմակերպվում են շրջագայություններ, իսկ զբոսաշրջության աճի համար այցելուներին խրախուսվում է տեսնել բոլոր տեխնածին գեղեցկությունները, որոնցում զբոսաշրջիկները կարող են հարմարավետություն և շքեղություն ստանալ: Էկոտուրիզմը նպատակ ունի զբոսաշրջիկներին ծանոթացնել տվյալ տարածքի սոցիալական և տնտեսական կլիմայի իրողություններին: Էկոզբոսաշրջությունը նպաստում է շրջակա միջավայրի պաշտպանությանը, ապահովում է տեղի բնակիչների ակտիվ սոցիալտնտեսական մասնակցությունն իրականացվող միջոցառումներին: Նման ճամփորդությունների նպատակը շրջագայություններն են դեպի համեմատաբար անձեռնմխելի բնական տարածքներ, որոնք նպաստում են բնական գեղեցկությունների և ռեսուրսների պաշտպանությանը, դրանց ռացիոնալ օգտագործմանը: Նման շրջագայությունների ժամանակ բնական օբյեկտը (լիճ, քարանձավ, ծառ, կենդանիների տեսակներ, բույսեր, լանդշաֆտ) բերում է ինտելեկտուալ հաճույք:

Էկոզբոսաշրջության խնդիրներն են բնական և մշակութային ժառանգության պահպանության օժանդակումը, ազգաբնակչության էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացումը: էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության առավել արագ զարգացող ճյուղերից է, չի նախատեսում հարմարավետ հյուրանոցներ և բարձրակարգ սպասարկման ծառայություններ, իրականացվում է ավտոմեքենայով, հետիոտն, ձիով, վրանային և այլ միջոցներով:

Էկոլոգիական զբոսաշրջության տեսակները

Այս տեսակի զբոսաշրջությունը կարելի է բաժանել մի քանի ենթատիպով:

1.Մշակութային Էկո-տուրիզմ: Ներառում է մի շարք գիտական և մշակութային, կրթական և տուրիստական էքսկուրսիաներ: Նման տուրերն ուղեկցվում են հատուկ էկոլոգիական երթուղիներով:

2.Գիտաճանաչողական Էկո-տուրիզմ: Սովորաբար այս դեպքում ազգային պարկերը և բնապահպանական վայրերը հանդես են գալիս որպես զբոսաշրջային վայրեր: Գիտական շրջայցերի ընթացքում զբոսաշրջիկները անցկացնում են դաշտային դիտարկումներ և մասնակցում են հետազոտական արշավներին:

3.**Արկածային Էկո-տուրիզմ:** Կարող է ներառել շրջագայություններ դեպի հեռավոր շրջաններ, հեծանիվների կարճատև շրջագայություններ, դժվարին տեղանքով քայլք, ֆիզիկական բեռներով ճանապարհորդել, ճանապարհորդել դեպի գյուղեր: Այսպիսի էկոտուրիզմը կապված է բացօթյա հանգստի հետ, որը ներառում է լեռնագնացություն, լեռնադահուկային սպորտ և այն:

4.**Բնապահպանական Էկո-տուրիզմ**: Պաշարների յուրօրինակ և էկզոտիկ բնական օբյեկտներն ու երևույթները ներգրավում են բազմաթիվ զբոսաշրջիկների:

Էկոլոգիական տուրիզմի սկզբունքները հետևյալն են.

- Մտավոր և հուզական հաճույքները բերում են դեպի բնության վայրեր և բնական հուշարձաններ (լիճ, քարանձավ, ծառ, կենդանիների տեսակներ, բույսեր, լանդշաֆտ),
- Բնության կամ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- Զբոսաշրջություն՝ սահմանափակ քանակի խմբերով և զբոսաշրջիկներով առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու, որը բնությանը կտա հնարավորություն

որոշակի ժամանակահատվածում վերականգնվելու և բնության բաղադրիչների վերարտադրություն իրականացնելու:

Էկոտուրիզմը ավանդական զբոսաշրջությունից տարբերվում է հետևյալ նշաններով.

- Տուրիզմի այս տեսակում բնական օբյեկտների գերակշռություն,
- Բնության խելամիտ օգտագործում և կառավարում,
- Անմիջական մասնակցություն տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանը,
- Զբոսաշրջիկների էկոլոգիական կրթվածությունը:

Էկոտուրիզմի հիմնական տարբերակիչը այն է, որ այն խթանում և բավարարում է բնության հետ շփվելու ցանկությունը, կանխում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև խրախուսում է զբոսաշրջության մասնագետներին և ճանապարհորդներին պահպանել բնությունը և նպաստել նրա սոցիալ-տնտեսական զարգացմանը: Էկոլոգիական տուրիզմի հետ միասին հաճախ օգտագործվում է նաև գյուղական տուրիզմը:

Գյուղական տուրիզմ-տուրիզմի զարգացող տեսակ է, որը կենտրոնացած է գյուղական վայրերում: Գյուղական տուրիզմը ներգնա և ներքին տուրիզմի զարգացող տեսակներից մեկն է, որըհ համարվում է նոր հեռնկարային ուղղություն այս ոլորտում:

Գյուղական տուրիզմ հասկացությունը հաճախ համեմատվում է ագրոտուրիզմ հասկացության հետ, սակայն գյուղական տուրիզմի երևույթի նշանակությունը անհամեմատ ավելի լայն է: Գյուղական տուրիզմում սպասվում է հանգիստ գյուղական կյանք (մաքուր օդ, լռություն և բնական արտադրանքներ, հարմարավետ կենսպայմաններ, ընտանեկան մթնոլորտ, ողջամիտ գներ, ավելի մոտիկից փոխհարաբերություն բնության հետ, նոր փորձառություններ ձեռք բերում, ծանոթացում տեղի ավանդույթների հետ, երեխաների զվարճանքի համար արդյունավետ պայմաններ և ժամանցային միջոցառումներ մեծերի հմար): Ագրոտուրիզմը զբոսաշրջության ենթատեսակ է, որը ներառում է գյուղական բնակավայրերի (ֆերմերային) տնտեսություն օգտագործումը: Օրինակ՝ բերքահավաքին մասնակցելը: Ագրոտուրիզմն այս եղանակով հանդես է գալիս որպես գյուղական տուրիզմի ձև: Ագրոտուրիզմում՝ տնային տնտեսություն (ֆերմերային տնտեսությունը) համարավում է միաժամանակ և բնակեցման ձև, և զբոսաշրջիկների համար հետաքրքրության հիմնական առարկա:

Էկոլոգիական տուրիզմը–ճանապարհորդության ձև է, որը բարեհաջող կերպով արտահայտվում է շրջակա միջավայրում: Նման տուրիզմի կազմակերպումը նախատեսված է բնության միջավայրում՝ ունենալով բնության համապատասխան ռեսուրսներ և արժեքներ, ինչպիսիք են ազգային և լանդշաֆտային պարկերը: Էկոտուրիզմը նպատակ ունի իրականացնել զբոսաշրջիկների այցելած տվյալ երկրում բնության և մշակութային արժեքների պահպանություն և պաշտպանություն:

ՀՀ հարուստ է բնական և պատմամշակութային հուշարձաններով, ռեկրեացիոն պաշարներով, որոնք էկոզբոսաշրջության զարգացման կարևոր նախապայմաններ են:

Էկոտուրիզմը կարող է ապահովել ազգային պարկերի և այլ բնական տարածքների պաշտպանությունը, կարող է բարձրացնել զբոսաշրջիկների շրջանում կրթության և ակտիվության մակարդակը՝ դարձնելով նրանց շրջակա միջավայրի պաշտպանության ավելի խանդավառ և ազդեցիկ գործակալներ:

Այս տեսակը զբոսաշրջության ոլորտի առավել դինամիկ զարգացող հատվածներից մեկն է, որի տարեկան աճը կազմում է 20-30%, իսկ միջազգային զբոսաշրջությունից ստացված եկամուտներում մասնաբաժինը 10-15% է:

Էկոլոգիական զբոսաշրջություն կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևորագույն սկզբունքները.

1.Բնական և սոցիալ-մշակութային բնույթի բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելը, էկոլոգիական կայունության ապահովումը:

2.Բնության պաշտպանությանը և տեղական սոցիալ-մշակութային միջավայրին աջակցելը:

3.Բնապահպանական կրթությունը և իրազեկումը:

4.Բնակիչների մասնակցությունը և զբոսաշրջային գործունեությունից եկամուտների ստացումը, ինչը նրանց համար ստեղծում է բնության պահպանության տնտեսական խթաններ:

5.Տնտեսական արդյունավետություն և ներդրում այցելության տարածաշրջանների կայուն զարգացման գործում:

Միջազգային փորձը փաստում է, որ ներկայումս խիստ ուշագրավ է էկոտնակների կամ էկոտների կիրառումը: Պատահական չէ, որ դեռևս հարյուրավոր տարիներ առաջ տների կառուցման ժամանակ մարդիկ ընտրում էին էկոլոգիապես մաքուր նյութ, այն է՝ փայտը:

Բնական հարստությունները և տեխնոլոգիական հնարավորությունները խթան հանդիսացան կյանքի կոչելու մարդու դարավոր երազանքներից մեկը՝ բնական հումքից պատրաստված տներ ունենալը: Ի տարբերություն այլ տների՝ փայտից պատրաստվածները շնչում են իրենց կյանքի ողջ ընթացքում:

Գլուխ 1.2
Էկոտուրիզմը աշխարհում

Էկոտուրիզմի տարածումը մեր օրերում՝ 2023 թվականի բավականին մեծացել է՝ ելնելով շրջակա միջավայրի պահպանության խնդիրներից: Էկոլոգիական տուրիզմի աշխարհագրությունն առանձնահատուկ է: Միջազգային խոշոր զբոսաշրջային հոսքեր ուղղված զարգացած երկրներից դեպի ավելի զարգացած երկրներ՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Իսպանիա, Իտալիա և մի շարք այլ երկրներ առաջատար են այս ոլորտի զարգացման գործում: Սակայն այսօր ավելի ու ավելի է մեծանում զարգացող երկրների դերն ու նշանակությունը զբոսաշրջության այս ուղղության համար և զարգացած երկրներից ավելի ու ավելի շատ էկոտուրիստներ են ուղարկվում դեպի զարգացող երկրներ: Այստեղ առաջատարների թվում են Քենիան, Տանզանիան, Էկվադորը, Կոստա Ռիկան, Նեպալը, ինչպես նաև Ավստրալիան, Նոր Զելանդիան և Հարավային Աֆրիկան:

Էկոտուրիզմն Աֆրիկայում

Աֆրիկայում նույնպես էկոտուրիզմը զբոսաշրջության ամենաարագ զարգացող ոլորտներից մեկն է ու առանձնահատուկ ոլորտ է, քանի որ ապահովում է տեղի բազմաթիվ երկրների տնտեսությունը:

Աֆրիկայում կան զբոսաշրջության տարբեր տեսակներ, քանի որ աֆրիկյան բնությունը շատ բազմազան է և միևնույն ժամանակ հարուստ յուրահատուկ հատկանիշներով: Այս առումով էկոտուրիզմն այժմ ամենատարածվածն է ժամանակակից ճանապարհորդների մոտ, ովքեր փնտրում են ոչ միայն սովորական հանգիստ, այլև անսովոր զգացողություններ և սուր հիշողություններ: Սև աշխարհամասում էկոլոգիական զբոսաշրջությունը նշանակում է՝ լինել մայրցամաքի այն վայրերում, որտեղ կան բնության հատուկ օբյեկտներ, որոնք ենթակա չեն որևէ աղավաղման կամ աղտոտման: Ընդ որում, նման ճամփորդության նպատակը եզակի բնական պայմանների իմացությունն ու դրանց հետագա բարելավումն է:

Էկոտուրիզմի լավագույն ուղղություններն Աֆրիկայում

Ֆինդա արգելանոցը

Ֆինդա մասնավոր արգելանոցն իր մեջ ներառում է 29,866 հեկտար պաշտպանված վայրի բնության հողատարածք: Այնտեղ կարելի է տեսնել մայրցամաքի խոշոր կենդանիներից՝ առյուծ, ընձառյուծ, փիղ, գոմեշ և ռնգեղջյուր, քանզի դա նրանց տունն է, ինչպես նաև կարելի է հանդիպել ավելի քան 436 թռչունների տեսակներ: Արգելոցը հատկապես հայտնի է հազվագյուտ սև ռնգեղջյուրի առկայությամբ, որոնց կարելի է նաև նկարահանել:

Արգելանոցն իր մեջ ընդգրկում է Հարավային Աֆրիկայի անտառները, խոտածածկ տարածքները, լեռնաշղթաները, գետերը և ճահիճները:

Ֆինդա ընկերությունն առաջարկում է՝

- «Ընտանեկան տուր փաթեթ», որը կազմված է 13 օրից և ունի հարուստ գրաֆիկ, որի ընթացքում ծանոթանում են վայրի բնութանն ու շփվում վայրի կենդանիների հետ:
- «7 հրաշք, 7 օր» այս տուր փաթեթն առաջարկում է՝ վրանային հանգիստ լճի ափին, մասնակցություն վայրի բնության պահպանման գործունեությանը, լողալ օվկիանոսում հատուկ սարքավերուներով, ծանոթացում Զուլուս համայնքին և այլն:

Հրաբխի ազգային պարկը

Ռուանդայի հյուսիս-արևմտյան անկյունում գտնվող Վիրունգա լեռնաշղթայի մառախլապատ, անտառապատ լանջերին է գտնվում Հրաբխի ազգային պարկը: Սա Աֆրիկայի լավագույն էկոտուրիզմի ուղղություններից մեկն է, որտեղ ապրում է աշխարհի լեռնային գորիլաների մեծ մասը: Եվ որպես Աֆրիկայի ամենաբազմազան զբոսայգիներից մեկը, Հրաբխային ազգային պարկը պարծենում է նաև թռչունների երգի սիմֆոնիայով, որտեղ ավելի քան 180 թռչունների տեսակներ են ապրում խիտ անտառում:

Ռուանդան որպես երկիր առաջատար է կայուն էկոտուրիզմի ոլորտում, այնտեղ արգելվում է պլաստիկ տոպրակների օգտագործումը, ունեն կայուն մոդելային կացարաններից և կենդանիների պահպանման խիստ կանոնակարգ: Հրաբուխներ ազգային պարկը կենտրոնացած է գորիլաների պահպանման վրա, որտեղ կա մոտ 400 լեռնային գորիլաներ: Պարկում կազմակերվում են քայլարշավներ, որի ընթացքում զբոսաշրջիկները կկարողանան հանդիպել գորիլաների հետ դեմ առ դեմ:

Քանի որ ազգային պարկը հանդիսանում է գորիլաների և այլ վայրի կենդանիների պաշտպանության վայր, նախքան այնտեղ այցելելը, պետք է ստանալ անհրաժեշտ թույլտվությունները: Բացի այդ, պետք է հետևել խիստ պահպանման կանոններին, որպեսզի ոչ մարդիկ վնասվեն, ոչ էլ վայրի բնությունը:

Հարավային Լուանգվա ազգային պարկը

Հարավային Լուանգվա ազգային պարկը գտնվում է՝ Զամբիայի Լուանգվա հովտում և զբաղեցնում է տարածէի մոտ 9050 կմ²-ը: Պարկն այլ կերպ անվանում են նաև «Հարավային պարկ»: Ազգային պարկով է հոսում նաև համանուն գետը, այն դարձնելով ավելի գեղեցիկ ու հետաքրքիր: Այգին հայտնի է իր բազմազան կենդանական աշխարհով, այնտեղ կան՝ աֆրիկյան վայրի շուն, առյուծ և ընձառյուծ, փիղ, գոմեշ, գետաձի և այլն: Այգում կան նաև ավելի քան 400 տեսակի թռչուններ: Լուանգվա ազգային պարկն առաջարկում է ինչպես հյուրանոցային, այնպես էլ վրանային գիշերակացներ, տուրեր առավոտյան և երեկոյան ժամերին: Կան բոլոր պայմանները, որպեսզի զբոսաշրջիկն այցելի այտեղ:

Էկոտուրիզմը Ռուսաստանում

Ռուսաստանը իդեալական վայր է էկոլոգիական զբոսաշրջության համար. Նախ՝ երկրի ընդարձակ տարածքը կիսով չափ բնակեցված է: Երկրորդ, մոլորակի գրեթե բոլոր կլիմայական գոտիները անցնում են Ռուսաստանի տարածքով՝ Արկտիկայից մինչև մերձարևադարձային: Եվ երրորդ, լանդշաֆտներն այնքան բազմազան են և զարմանալի, որ 11 եզակի բնական վայրեր արդեն ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում, և ևս 15 տարածքներ սպասում են դրան ավելացնելուն: Սա նշանակում է, որ ունենք էկոտուրիզմի վայրերի հսկայական ընտրություն Ռուսաստանում:

Բայկալ

Բայկալը Ռուսաստանի ամենահայտնի էկոտուրիստական ուղղությունն է: Ավելին, հենց Բայկալից է, որ խորհուրդ է տրվում սկսել էկո ճանապարհորդությունը: Բայկալը գեղեցիկ պահպանվող տարածք է: Մոտակայքում միշտ կլինեն բնակավայրեր և հասանելի հաղորդակցություն, բայց միևնույն ժամանակ կարելի է լիովին վայելել բացօթյա հանգիստը, գիշերները բաց երկնքի տակ վրաններում և բացօթյա գործունեությունը:

Լեռնային Ալթայ

Լեռնային Ալթայը երկրում էկոտուրիզմի երկրորդ ամենահայտնի վայրն է: Ալթայի լեռները, ինչպես Բայկալը, պաշտպանված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից: Բացի այդ, քաղաքակրթությունն այստեղ բավականին մոտ է, և դա հնարավոր է դարձնում անվտանգ և բացօթյա հանգիստը:

Պուտորանա սարահարթ

Պուտորանա սարահարթը կորած, խորհրդավոր և անձեռնմխելի վայր է Ռուսաստանում: Այն 250 կմ² տարածք ունեցող լեռնաշղթա է (ի դեպ, սա գործնականում Մեծ Բրիտանիայի տարածքն է): 2010 թվականից Պուտորանո սարահարթը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահպանվող ցուցակում: Այն գտնվում է Թայմիրում և մտնում է Կրասնոյարսկի երկրամասի մեջ: Սարահարթին ամենամոտ խոշոր բնակավայրը Նորիլսկն է:

Հրամանատար կղզիներ

Հրամանատար կղզիները արշիպելագ է Բերինգի ծովում՝ Կամչատկայի ափերի մոտ: Այս վայրն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախնական ցուցակում՝ եզակի վայրի բնության պատճառով: Այստեղ հնարավոր է տեսնել մորթյա փոկեր, ծովային առյուծների և ծովային ջրասամույրների ամենամեծ հնաբնակներից մի քանիսը, պարզել, թե ինչպիսի տեսք ունեն կորմորանները և նայել կետերին: Հրամանատար կղզիների ափերին կան 21 տեսակի կետային կենդանիներ, ինչպես նաև փոկեր, մորթյա փոկեր և հարյուրավոր տեսակի թռչուններ: Շրջագայության ընթացքում կարելի է նաև ուղղաթիռով թռչել Կամչատկայի երկրամասում գտնվող հայտնի Կուրիլ լիճ և տեսնել գորշ արջեր, որոնք ձկնորսություն են անում:

Շանթար կղզիներ

Շանթար կղզիները 15 փոքր կղզիներից կազմված արշիպելագ են Օխոտսկի ծովում՝ Խաբարովսկի երկրամասի ափերի մոտ: Այստեղ հասնելն այնքան էլ հեշտ չէ: Խաբարովսկից պետք է հազար կիլոմետր քշել մեքենայով կամ թռչել այս հեռավորությունը ուղղաթիռով: Շանթարները դասակարգվում են որպես Հեռավոր հյուսիսի շրջաններ, և տուրիստական սեզոնն այստեղ տևում է ընդամենը 3 ամիս: Մյուս կողմից, լոգիստիկայի դժվարությունների և կոշտ կլիմայի պատճառով այս կղզիները տարեկան այցելում են ընդամենը մի քանի հարյուր զբոսաշրջիկ: Այդ իսկ պատճառով այստեղ պահպանվել են գեղատեսիլ վայրի բնապատկերները և եզակի վայրի բնությունը:

Գլուխ 2.1
Հայաստանի աշխարհագրական դիրքը

Հայաստանի Հանրապետությունն աշխարհի շուրջ 200 անկախ, միջազգային ճանաչում ստացած պետություններից է: Տարածքի մեծությամբ (29743 կմ³) և բնակչության թվով (3 մլն մարդ) պատկանում է աշխարհի փոքր (որոնց թիվը 55 է), բայց ոչ փոքրագույն (զաճաճ) պետությունների խմբին:

Հայաստանը տարածքի մեծությամբ և բնակչության թվով զիջում է աշխարհի մոտ 130 պետություններին, այդ թվում իր բոլոր հարևաններին: ՀՀ-ն հյուսիսում սահմանակից է Վրաստանին, արևելքում և հարավ-արևմուտքում՝ Ադրբեջանին և նրա կազմի մեջ մտնող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը, հարավում՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը, արևմուտքում՝ Թուրքիային: Սահմանագծի ընդհանուր երկարությունը 1422 կմ է: Առանձնահատկություն է, որ պետական սահմանի ամենաերկար երկու հատվածները՝ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ, «փակ» են:

Ըստ կառավարման ձևի՝ ՀՀ-ը խորհրդարանական հանրապետություն է, ըստ պետական կառուցվածքի՝ ունիտար կամ միասնական պետություն:

Սահմանադրությամբ ՀՀ հռչակված է ժողովրդավարական պետություն: ՀՀ սահմանների ձևավորումը Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի տարածքում տարբեր դարերում ձևավորվել և կործանվել են հայկական բազմաթիվ պետական միավորումներ, սակայն դրանցից որևէ մեկը չի ունեցել հանրապետության կարգավիճակ (հիմնականում եղել են թագավորություններ):

Գլուխ 2.2
Էկոզբոսաշրջությունը Հայաստանում

Հայաստանը յուրահատուկ երկիր է իր ամենատարբերվող բնությամբ և մաքրամաքուր օդով: Եվ զբոսաշրջիկները , և տեղացիները առանձնացնում են մի քանի վայր, որոնք ամենաշատն են համապատասխանում էկոտուրիզմի կազմակերպմանը:

Էկոտուրիզմի կազմակերպումը նախընտրելի է հատկապես Ծաղկաձորում, Դիլիջանում և Ջերմուկում՝ շնորհիվ յուրահատուկ և չկրկնցվող բնության:

Ծաղկաձորը գրավում է իր հմայիչ լեռնային գեղեցկությամբ և բազմաթիվ անզուգական վայրերով: Այս քաղաքը յուրահատուկ է նաև իր շրջակա օբյեկտներով, բայց քաղաքի գլխավոր զարդարանքը մնում են լեռնային լանջերնը:

Դիլիջանը հայտնի է ոչ միայն Հայաստանում, այլն նաև հարակից երկրներում իր անտառներով, ազգային և լանդշաֆտային պարկերով, որոնք ունեն հսկայական բուժական նշանակություն և ցուցված են մի շարք թոքային և շնչառական հիվանդությունների բուժմանը: Մաքուր լեռնային օդը և սաղարթախիտ անտառները հնարավորություն են տալիս կտրվել քաղաքային եռուզեռից ու ամենօրյա անվերջ թվացող խնդիրներից:

Բայց բոլոր դեպքերում, Էկոտուրիզմի կազմակերպման լավագույն վայրը մնում են գյուղական շրջանները: Նրանից յուրաքանչյուրը ունի իրեն բնորոշ յուրահատուկ պատմություն, ավանդույթներ, սովորություններ, իրենց հատուկ ուտեստներ:

Կարելի է ասել, որ գյուղական տուրիզմը գտնվում է զարգացման մակարդակի վրա և Հայաստանը առավելագույնս հարմարեցված է Էկոլոգիական տուրիզմի կազմակերպման և զարգացման համար:

Հայաստանը տարածաշրջանում կարող է հավակնել էկոտուրիզմի ամենաբարենպաստ գոտիներից մեկը դառնալուն: Բավական է նշել, որ Հայաստանում վանքերը մեծ մասամբ կառուցված են բնակության վայրերից հեռու, այնտեղ, ուր բնությունը հիասքանչ է: Ավելին, պատմական և բնական հուշարձանները փոխկապակցված ու միասնական են:

Այստեղ կազմակերպվում են միջոցառումներ, որը նաև գրավում է զբոսաշրջիկներին, ինչը նպաստում է երկրի զարգացմանը: 2016 թվականից ՀՀ Վայոց ձորի մարզում անցկացվում է էկոտուրիզմի ամենամյա փառատոնը: Փառատոնի հիմնական նպատակն է զարգացնել էկոտուրիզմը Հայաստանում՝ բարձրացնելով հասարակության իրազեկվածությունը շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Էկոտուրիզմի փառատոնին սովորաբար մասնակցում են էկոտուրիստներ, մարդիկ, ովքեր հետաքրքրված են էկոտուրիզմի հայեցակարգով և բազմաթիվ տեղական համայնքներ, ովքեր հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց էկոլոգիապես մաքուր արտադրանքը:

Էկոտուրիզմը Հայաստանում առաջարկում է բազմաթիվ գործունեություն, ինչպիսիք են.

Լեռնագնացություն

Լեռնագնացությունը հայտնի է նաև որպես լեռնային արշավ կամ ալպինիզմ: Սա շատ տարածված է Հայաստանում, ինչը բնավ զարմանալի չէ. Հայաստանը հայտնի է որպես լեռնային երկիր: Ամենաբարձր լեռը Արագածն է (4090մ): Սովորաբար, Հայաստանի տուրիստական գործակալությունները իրենց տուրերում ընդգրկում են լեռնագնացային շրջագայություններ: Այս արշավները հիմնականում արվում են

ոտքով, ինչը նաև նպաստում է բնության պահպանությանը: Լեռնագնացության ձևավորման սկիզբը համարվում է 1786 թվական, երբ 2 շվեյցարացի՝ գյուղացի Ժ. Բալման և բժիշկ Մ. Պակկարը առաջինը հաղթահարեցին Ալպերի (որտեղից էլ առաջացել է անվանումը) ամենաբարձր գագաթը՝ Մոնբլանը (4810 մ), իսկ հայկական լեռնագնացության պատմությունը սկիզբ է առնում Արարատից: Հայաստանում ալպինիստական առաջին արշավն իրականացվել է 1829 թվականի սեպտեմբերի 27-ին, երբ Դորպատի (այժմ՝ Էստոնիայի Հանրապետության Տարտու քաղաք) համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրոտը և Խ. Աբովյանը բարձրացան Արարատի (Մեծ Մասիս) գագաթը (5165 մ): 1845 թվականի հուլիսի 29-ին Արարատի գագաթն է բարձրացել գերմանացի երկրաբան Հ. Աբիխը՝ թարգմանիչ Պ. Շարոյանի և երկու այլ հայերի ուղեկցությամբ՝ Հովհաննես Այվազյանի, Մուրադ Պողոսյանի: 1896 թվականի սեպտեմբերի 14-ին Արարատը հաղթահարել է նաև Ցյուրիխի համալսարանի պրոֆեսոր Ի. Աբելյանը: Հայաստանում տարբեր ուղություններով ալպինիստական արշավներ են կազմակերպվում, սակայն առավել նշանավոր է համարվում Արագած լեռան(4090 մ) վերելքը, որը Հայաստանի ամենաբարձր գագաթն է: 1935 թվականին հայ ալպինիստները նվաճել են Մեծ Կովկաս լեռնային համակարգի ամենաբարձր՝ Էլբրուս գագաթը (5642 մ):

Քայլարշավներ

Հայաստանը լեռնային երկիր է, որն առաջարկում է արշավային ուղղությունների հսկայական տեսականի, որոնք ուղեկցվում են հիասքանչ բնական տեսարաններով: Հայաստանում արշավը նաև հնարավորություն է շփվելու տեղացիների հետ, տեսնելու Հայաստանի գյուղական կյանքը և, ինչու ոչ, զգալու իսկական հայկական հյուրընկալությունը: Գնելով տեղական համայնքներից տնական, օրգանական արտադրանք՝ խրախուսում ենք բնակիչներին մնալ գյուղում և շարունակել զարգացնել իրենց աշխատանքը, ինչպես նաև նպաստում ենք գյուղի տնտեսության զարգացմանը:

Հեծանվային արշավներ

Հեծանվային տուրիզմը Հայաստանում էկոզբոսաշրջության նոր և զարգացող տեսակ է: Հեծանվային արշավներ կազմակերպում են նաև լեռներում: Հեծանվային զբոսանքները հիանալի միջոց են շրջապատող աշխարհը ուսումնասիրելու և զգալու համար:

Ահա որոշ հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնել հեծանիվով զբոսանք պլանավորելիս.

Ընտրել երթուղի. Երթուղի ընտրելիս պետք է հաշվի առնել հեռավորությունը, տեղանքը և տեսարանը: Կան բազմաթիվ առցանց ռեսուրսներ, որոնք կօգնեն գտնել հեծանվային հարմար երթուղիներ, ինչպիսիք են Google Maps-ը կամ տեղական հեծանվային ակումբները:

Պատրաստել սարքավորումը. Երթևեկելուց առաջ հարկավոր է համոզված լինել, որ հեծանիվը լավ վիճակում է: Պետք է ստուգել անվադողերը, արգելակները, փոխանցումները և շղթան՝ ցանկացած խնդիրների համար: Նաև պետք է կրել սաղավարտ և հարմարավետ հագուստ, որը հարմար է եղանակային պայմաններին:

Լինել հագեցած և սնված. Հարկավոր է շատ ջուր և նախուտեստներ բերել, որպեսզի երթևեկության ընթացքում սնվել:

Անվտանգությունն առաջին հերթին. Պետք է միշտ հետևել ճանապարհային երթևեկության կանոններին և կրել արտացոլող հագուստ: Նաև պետք է համոզված

լինել, որ ինչ-որ մեկին տեղեկացրել ենք երթուղին և վերադարձի սպասվող ժամանակը:

Վայելել զբոսանքը. Դիտել տեսարանները, շնչել մաքուր օդը և վայելել երկու անիվների վրա գտնվելու ազատությունը: Հեծանվավազքը հիանալի միջոց է նոր տարածքներ ուսումնասիրելու և միևնույն ժամանակ մարզվելու համար:

Ընդհանուր առմամբ, հեծանվային զբոսանքները հիանալի միջոց են դրսում ուսումնասիրելու և ակտիվ մնալու համար:

Ի դեպ, նշեմ, որ երգիչ Արամ MP3-ին ունի մի հաղորդաշար՝ VELO MP3-ի անունով, որտեղ Արամը հեծանվային ճամփորդություն է սկսել Հայաստանում, ինչը օգնում է բացահայտել մեր երկիրը:

«Բայքլայֆ» սոցիալական ձեռնարկատիրությունը Գյումրիում և նրա շրջակայքում շուրջ երկու տարի իրականացնում է հեծանվային գործունեություն՝ նպաստելով երիտասարդների կյանքի որակի և շրջակա միջավայրի բարելավմանը, համայնքի ենթակառուցվածքների և զբոսաշրջության զարգացմանը՝ տեղացիներին և հյուրերին մատչելի ծառայություններ մատուցելով:

Վանաձորում տեղակայված «Բու մաունթին բայք փարք» նախագիծը կազմակերպում է հեծանվարշավներ քաղաքի մեջ և ողջ մարզի տարածքում: Այստեղ կարելի է նաև վարձակալել հեծանիվներ և տեղեկանալ հնարավոր երթուղիների մասին:

Դսեղ գյուղի ՏՈՒԿ («Տուրիզմի ուրույն կենտրոն») կենտրոնում և ՔՈԱՖ այցելուների կենտրոնում նույնպես հնարավոր է գտնել վարձով հեծանիվներ, որոնցով կարելի է ճամփորդել Դեբեդի կիրճով, կամ, օրինակ, շրջել 8 կմ երկարություն ունեցող Դսեղի օղակաձև արահետով՝ վայելելով գյուղի, Դեբեդի ու Ձորագետի կիրճերի կախարդական տեսարանները:

Ձիարշավային տուրեր

Ձիերով զբոսանքներ կազմակերպվում են դաշտերում, լեռներում և ձորերում: Տևողությունը կարող է լինել մի քանի րոպեից մինչև մի քանի օր: Հայաստանում դեռ կան գյուղեր, որտեղ մարդիկ որպես տրանսպորտային միջոց գերադասում են ձիերին:

Կազմակերպվում են ձիարշավային միջոցառումներ, որի ժամանակ խմբով հեծնում են դեպի բնություն: Տարեցտարի Հայաստանում ձիավարության նոր ուղղություններ, երթուղիներ ու արահետներ են բացվում: Հիմնական ֆիզիկական պատրաստվածություն, նոր բացահայտումների և նոր փորձառությունների հանդեպ կիրք, լավ ձի և պրոֆեսիոնալ հրահանգիչի գրագետ ուսուցում. ահա այն ամենը, ինչ անհրաժեշտ է Հայաստանի վայրի բնության զարմանահրաշ լանդշաֆտների միջով հաջողված ձիարշավի համար:

Քարանձավային արշավներ

Քարանձավային արշավն այլ ձև ասում են Քեյվինգ: Հայաստանը ծածկված է լեռներով, և բնականաբար, այստեղ շատ են քարանձավները: Քարանձավային արշավները արկածային և հետաքրքիր ուղևորություններ են, որոնք ներառում են քարանձավների և ստորգետնյա այլ վայրերի ուսումնասիրություն: Քարանձավային արշավները լի են սուր զգացողություններով և տպավորություններով: Հայտնի քարանձավներից են Խնձորեսկի, Արենիի և Մոզրովի քարանձավները: Քարանձավային տուրերը Հայաստանի քարանձավներում զբոսաշրջության բոլորովին նոր և էկզոտիկ տեսակ է, թեև լեռներում և կիրճերում քարանձավների պակաս չկա, և նրանցից շատերը սպասում են իրենց հայտնաբերման ժամին: Այս քարանձավներից

շատերում հնագետները գտնում են անհիշելի ժամանակներից հնագույն մարդկանց կյանքի հետքեր և դա էլ հենց հետաքրքրություն է առաջացնում այսպիսի արշավներ սիրողների մոտ:

Ահա որոշ հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնել քարանձավային արշավախումբը պլանավորելիս.

Փորձ և ուսուցում. Քարանձավային արշավը կարող է վտանգավոր լինել, ուստի հարկավոր է ունենալ պատշաճ ուսուցում և փորձ նախքան քարանձավային արշավի մասնակցելը: Տեղական քարանձավային ակումբին միանալը կամ քարանձավների դասընթաց անցնելը կարող է գիտելիք և փորձ ձեռք բերելու հիանալի միջոց լինել:

Սարքավորումներ. Համապատասխան սարքավորումները կարևոր են անվտանգ և հաջող քարանձավային արշավախմբի համար: Սա կարող է ներառել սաղավարտներ, լուսարձակներ, պարաններ, ամրագոտիներ և պաշտպանիչ հագուստ: Դուրս գալուց առաջ կարևոր է համոզվել, որ բոլոր սարքավորումները լավ վիճակում են:

Անվտանգության միջոցներ. Քարանձավային արշավները կարող են վտանգավոր լինել, ուստի կարևոր է համապատասխան անվտանգության միջոցներ ձեռնարկել: Պարտադիր ձեռքի տակ ունենալ առաջին օգնության հավաքածու, օգտագործել անվտանգության պարաններ և համոզվել, որ թիմի բոլոր անդամները տեղյակ են հնարավոր վտանգների մասին:

Շրջակա միջավայր. Քարանձավները յուրահատուկ միջավայրեր են, որոնք պահանջում են հատուկ նկատառումներ: Կարևոր է տեղյակ լինել շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների մասին և հետևել լավագույն փորձին՝ նվազագույնի հասցնելու ազդեցությունը քարանձավի էկոհամակարգի վրա:

Պլանավորում և նախապատրաստում. Հաջողակ քարանձավային արշավը պահանջում է մանրակրկիտ պլանավորում և նախապատրաստում: Սա կարող է ներառել քարանձավային համակարգի ուսումնասիրություն, անհրաժեշտ թույլտվությունների ստացում և երթուղու քարտեզագրում:

Ընդհանուր առմամբ, քարանձավային արշավները կարող են հուզիչ և պարգևատրող փորձառություններ լինել նրանց համար, ովքեր պատշաճ պատրաստված են:

Ազոխի քարաննձավ. Արցախի Հադրութի շրջանի Ազոխ և Դրախտիկ գյուղերի միջև է գտնվում խորհրդավոր Ազոխի քարանձավը, որը նաև անվանում են Որվանի անձավ: Ազոխի քարանձավն աշխարհագրորեն տեղակայված է բնական միջանցքում, որով հնագույն մարդիկ և կենդանիները գաղթել են Աֆրիկայից դեպի Եվրոպա և Ասիա: Այն տարածաշրջանի հնագիտության և հնէաբանության կարևոր հնավայրերից է, որով կուսումնասիրվեն նախնադարի մարդկանց տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհով: Այժմ գտնվում է Ադրբեջանի օկուպացիայի տակ:

Ազոխի կրաքարե քարանձավը ունի շուրջ 8000 քմ տարածություն: Քարանձավն ունի բազմաթիվ մուտքեր և ելքեր, ունի վեց դահլիճներ, որոնք նման են լաբիրինթոսների: Դահլիճներից ամենամեծը ունի շուրջ 3000 քմ տարածություն: Այս դահլիճներում պեղումների ընթացքում հայտնաբերել են երեք հարյուր հազար տարվա վաղեմություն ունեցող քարե գործիքներ, բուսական և կենդանական աշխարհի բրածո մնացորդներ, նախամարդու արվեստի հետքեր, ինչպես նաև արտադրական թափոններ:

Քարայրում հայտնաբերված կենդանիների մնացորդները թույլ են տալիս եզրակացնել, որ քարայրի առաջին «բնակիչները» եղել են շատ բազմազան: Այստեղ հայտնաբերվել են այնպիսի կենդանիների մնացորդներ, որոնց ցեղատեսակներն այժմ գոյություն չունեն: Քարանձավում հայտնաբերվել են 43 տարբեր տեսակի կենդանիների ավելի քան 20 հազար ոսկորներ, ինչպես նաև ավելի քան 6000 քարե գործիքներ և այլ իրեր: Քարանձավում հայտնաբերվել է նաև նախամարդու ծնոտի մի խոշոր բեկոր և միջնադարյան քարակերտ շինության մնացորդներ:

*Թռչունների քարանձավ.*Վայոց Ձորի մարզում է գտնվում Հայաստանի ամենահայտնի քարանձավներից մեկը՝ Թռչունների քարանձավը (ավելի շատ հայտնի ինչպես **Արենի քարանձավ**): Քարանձավը գտնվում է Եղեգնաձորից 12 կմ հեռավորության վրա, Արենի գետի ձախ ափին: Ի տարբերություն Մագելի քարանձավի, Թռչունների քարանձավն ավելի հեշտ է ուսումնասիրվում: Քարանձավն իրենից ներկայացնում է իրար միացած փոքր քարայրների համալիր: Բաղկացած է 3 սրահներից և ունի մոտ 500 մ² մակերես: Թռչունների քարանձավի մեծ մասը դեռևս ուսումնասիրված չէ:

2008 թվականի սեպտեմբերին Թռչունների քարանձավում իրականացրած պեղումների արդյունքում հայտնաբերեցին աշխարհում ամենահին՝ ավելի քան 5500 տարեկան կաշվե կոշիկը: Այն հայտնաբերած հնագիտական թիմի ղեկավարը՝ Իռլանդիայի Քորք համալսարանի հնագետ Ռոն Փինհասին, համարում է, որ կոշիկի մեջ հայտնաբերված խոտը խցկել են, որպեսզի ոտնամանը պահպանի իր ձևը: Ավելի ուշ, պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվեցին էնեոլիթյան դարաշրջանի գինեգործության վկայություններ: Կատարած հետազոտությունների արդյունքում գտել են չորացած խաղող, ամանեղեն, հագուստ, կանացի գանգեր և այլն: Թռչունների քարանձավը համարվում է աշխարհում գինու առաջին արտադրամասը: Ինչպես և Մագելի քարանձավի համար, Թռչունների քարանձավի հիմնական վտանգը մարդու ակտիվ գործունեությունն է: Այցելուները մեծ վնաս են հասցրել՝ քարայրի ներսում պատերին նկարելով և կոտրելով կամ իրենց հետ տանելով հատվածներ քարե աշխատանքներից:

*Լաստիվերի քարանձավ.*Լաստիվեր կոչվող տեղանքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Տավուշի մարզի Իջևանի շրջանի Ենոքավան գյուղից 3 կմ հեռավորության վրա, Խաչաղբյուր գետի անտառոտ կիրճում: Տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից, որի մասին վկայում են տեղի քարանձավները: 13-14 դարերում մոնղոլական արշավանքներից տարածքի բնակչությունը պատսպարվել է հենց այս քարանձավներում: Այստեղ նաև ճգնավորներ են ճգնել (այստեղից էլ Լաստիվեր անապատ անվանումը): Իսկ Լաստիվեր կոչվել է այն պատճառով, որ քարանձավ բարձրանալու համար Լաստի պես գերաններ են իրար կապել ու ճոպանով ձգել վերև. բարձրացնողը ձայն է տվել "լաստն ի վեր": Քարանձավի պատերին մի նկարիչ թողել է մի որմնաքանդակ, պատկերելով հարսանիք:

Արջերի քարանձավ. Վայոց Ձորի մարզի Արփի գյուղից 4 կմ հեռավորության վրա է գտնվում Հայաստանի թաքնված վայրերից մեկը՝ Արջերի քարանձավը: Քարանձավն ամենագեղեցիկներից մեկն է: Այն ունի 3,5 կմ երկարություն:

Քարանձավը 1978 թ-ին հայտնաբերել են որսորդները: Քարանձավի բազմաթիվ սենյակներից մեկում գտել են արջի ոսկորներ: Ասում են, որ արջը մտնելով քարանձավ մոլորվել է և չի կարողացել գտնել ելքը: Հենց արջի գտնված ոսկորներն են պատճառ դարձել, որ այն ստանա Արջերի քարանձավ անվանումը: Քարանձավն ունի տասնյակ

մեծ ու փոքր խորշեր։ Կան դժվարանցանելի հատվածներ, որոնցով հնարավոր է անցնել միայն սողեսող։ Շատ հեշտ հնարավոր է մոլորվել, այդ իսկ պատճառով քարանձավ պետք է գնալ միայն գիտակ մարդու ուղեկցությամբ։ Քարանձավն ամբողջությամբ ծածկված է ստալակտիտներով։ Ստորգետնյա աշխարհը հիացնում է իր գեղեցկությամբ, բայց այն կարելի է տեսնել միայն այնքան, ինչքան թույլ է տալիս լապտերիդ լուսավորությունը։

Արջերի քարանձավը գտնվում է պետական հսկողության ներքո։ Այնտեղ կարելի է այցելել միայն համապատասխան թույլտվություն ստանալուց հետո։

Վայրի բնության դիտարկում

Վայրի բնության դիտում Հայաստանում էկոտուրիզմի նոր զարգացող ուղղություն է։ Չնայած իր փոքր տարածքին, Հայաստանը բազմազան բուսական և կենդանական աշխարհ է։ Երկիրը լի է անտառներով. ընդհանուր առմամբ անտառները զբաղեցնում են երկրի տարածքի 12%-ը, իսկ մեծ մասը կենտրոնացած են հյուսիսում և հարավ-արևելքում։ Հայաստանի գեղատեսիլ լեռնային շրջանները կենդանիների հարուստ տեսականի են։ Հայաստանի ֆլորան ունի մոտ 3200 կենդանատեսակ, որոնցից 106-ը տարածաշրջանի էնդեմիկ են։

Ամբողջ աշխարհից թռչնաբաններ են գալիս Հայաստան՝ իր բնական բազմազանության պատճառով։ Հայաստանը հիանալի բնական լանդշաֆտների բազմազանությամբ երկիր է և կենսաբազմազանությամբ աշխարհի 34 լավագույն վայրերի ցանկում է։ Այստեղ ապրում են մոտ 370 տեսակի թռչուններ, 250 տեսակ թիթեռներ, 3500 տեսակ բույսեր, որոնցից 452-ը գրանցված են Կարմիր գրքում։ Էնդեմիզմի մակարդակը բավականին բարձր է՝ Հայաստանում հազվագյուտ և վտանգված են ձկների 11%-ը, երկկենցաղների 17%-ը, սողունների 24%-ը, թռչունների 23%-ը և կաթնասունների 24%-ը։ Հայաստանում դուք հնարավորություն կունենաք տեսնել և ուսումնասիրել բեզոարյան այծերը։

Վայոց ձորի մարզի Շատին գյուղի «Դիտակետ» հատուկ աստղադիտարանը հնարավորություն է տալիս դիտարկել բեզոարյան այծերին, տեսնել, թե ինչպես են նրանք իջնում ձորը ջուր խմելու համար։ Քարոտ միջավայրի շնորհիվ այծերը հեշտությամբ փախչում են վայրի կենդանիներից՝ բարձրանալով ժայռերի վրա։ Այս պահին աստղադիտարան օրական մեկ-երկու մարդ է այցելում։ Այնուամենայնիվ, որոշ աշխատանքներից և տեխնիկական խնդիրներ շտկելուց հետո աստղադիտարանը կարող է դառնալ ամենաշատ այցելվող զբոսաշրջային ուղղություններից մեկը։

Աստղադիտարանը մեծ ջանքեր է գործադրում բեզոարյան այծերին պաշտպանելու համար։

Թռչնադիտարկում

Թռչունները շրջակա միջավայրի վրա ունեն էկոլոգիական և էսթետիկ ազդեցություն։ Հայաստանում թռչունների դիտումը հետաքրքիր և կարևոր գործունեություն է։ Էկոտուրիզմի կարևորագույն ենթակառուցվածքներից են հատուկ պահպանվող բնական տարածքները։ Օրինակ՝ ազգային պարկերն ու պետական արգելոցները, որտեղ կարելի է գտնել բազմաթիվ վտանգված բնական տարածքներ։ Պահպանվող բնական տարածքներում էկոտուրիզմի զարգացման հիմնական նպատակը բնության և նրա մնացուկ տեսակների պաշտպանությունն է։ Հայաստանն աչքի է ընկնում իր գեղեցիկ և եզակի պահպանվող տարածքներով, անտառներով, լճերով և բույսերի բազմազանությամբ։

Մինչ օրս Հայաստանում հավաստիորեն գրանցվել է թռչունների առնվազն 372 տեսակ, որոնցից այստեղ բազմանում է ավելի քան 240 տեսակ: Եվրոպական թռչունների շատ տեսակներ Հայաստանում ներկայացված են տարածաշրջանային ձևերով, որոնք սովորաբար հանդիպում են երկիր թռչնարշավի ժամանակ, մինչդեռ 8-10 օր տևողությամբ գարուն-ամառ ճանապարհորդությունը սովորաբար հասնում է 200-220 տեսակի՝ գրեթե բոլոր տեսակներով:

Սևանա և Արփիլիճ լճերում են գտնվում Հայկական ճայերի՝ Citrine Wagtail-ի (վերջերս այստեղ բուծող) բազմացող աշխարհի ամենամեծ գաղութները, մինչդեռ վերջինս լիճը նաև աջակցում է դալմատյան հավալի փոքր բազմացող պոպուլյացիայի: Արարատյան օդանավի ձկնաբուծարաններում բնակվում են Փայլուն իբիսը, Պիգմայական կորմորանը, Մարմարե, Գանգավոր և Սպիտակագլուխ Բադերը: Եղեգն ու մացառներն այստեղ հյուրընկալում են Ménétries, Moustached, Paddyfield և Savi's Warblers-ին; Շրջապատող աղի հարթություններում Սպիտակ պոչավոր լապտերի ցեղատեսակը և ջրանցքների ափերին բնակեցված են սպիտակաթև և բեղավոր տերտերներ և կապտավեր մեղվակեր:

Գարնանը և ամռանը և ամբողջ սեպտեմբեր և հոկտեմբեր աշնանը այցելելու լավագույն ամիսներն են մայիս-հունիսը: 8-12 օրը պետք է դիտարկել որպես երկրի մասնագիտությունների մեծ մասը ստանալու նվազագույն ժամկետ: Ճանապարհների պայմանները զգալիորեն բարելավվել են վերջին մի քանի տարիների ընթացքում, սակայն երկար տարածություններով երթևեկությունը, այնուամենայնիվ, դանդաղ է ընթանում՝ մայրուղիների մեծ մասի և համատարած լեռնանցքների օձային բնույթի պատճառով:

Հեռավոր շրջաններում և դեպի լեռներ տանող արտաճանապարհային ուղիների մեծ մասը պահանջում է 4WD մեքենաներ՝ փորձառու վարորդով: Դրանք այժմ կարող են վարձակալվել տեղում՝ կամընտիր վարորդով կամ առանց դրա: Տարբեր հյուրանոցներ, B&B-ներ և տնային տիպի կացարաններ հասանելի են երկրի բոլոր մարզերում: Նույնիսկ ամենաշոգ ամառներին, երբ ցածրադիր վայրերում ջերմաստիճանը գերազանցում է 30-40C, պետք է սպասել եղանակային կտրուկ փոփոխություններ բարձր լեռներում, որտեղ հանկարծակի անձրևը կամ կարկտահարությունը արտասովոր չեն:

Հայաստանը իդեալական է էկոլոգիական զբոսաշրջության համար.

- Երկիրը գտնվում է ծովի մակարդակից 390-4090 մ բարձրության վրա, ուստի կա բազմազան բուսական և կենդանական աշխարհ;
- Գեղատեսիլ վայրերում կառուցվում են էկոլոգիապես մաքուր հյուրատներ. հայերը վաղուց փորձել են շենքեր կառուցել, որպեսզի դրանք հակադրվեն շրջակա միջավայրի հետ;
- Հանրապետության մարզերի մեծ մասը Հայաստանում ինտենսիվ զարգացնում է էկոտուրիզմը և առաջարկում է գործունեության և ժամանցի լայն շրջանակ;
- Ամեն տարի երկրում անցկացվում է էկոտուրիզմի լայնածավալ փառատոն: Այս ընթացքում երկիր են գալիս էկո ճանապարհորդներ ամբողջ աշխարհից: Այսպիսով, նրանք ձգտում են հասարակության ուշադրությունը հրավիրել էկոլոգիապես մաքուր հանգստի վրա:

Էկոզբոսաշրջության ուղիներ

Վայրեր, որոնք անպայման կգնահատեն նրանք, ովքեր ընտրում են էկոտուրիզմը Հայաստանում՝ Խոսրովի անտառ արգելոց, Ենոքավան (ամառային հանգստավայր Տավուշի մարզում) և Գոմք (գյուղ Վայոց ձորի մարզում)։

Այստեղ գեղեցիկ բնապատկերներ են, գրեթե անձեռնմխելի բնություն, զարմանալիորեն հյուրընկալ մարդիկ և մաքուր օդ։ Նման վայրերում զարգացած է բանջարեղենի և մրգերի մշակումն առանց քիմիական հավելումների, ուստի բոլոր մթերքներն էկոլոգիապես մաքուր և անվտանգ են։

Հայաստանում պատմական տեսարժան վայրերի մեծ մասը կա՛մ թաքնված են անտառներում, կա՛մ ավելի մոտ գյուղերին։ Եվ երբեմն դրանք գտնվում են այնպիսի հեռավոր վայրերում, որ դրանց հասնելու համար անհրաժեշտ է մի քանի կիլոմետր քայլել։ Այսպիսով, Հայաստանում էկոտուրիզմը հեշտությամբ կարելի է համատեղել արշավների և մշակութային ճամփորդությունների հետ։ Հայաստանի էկոտուրիզմի լավագույն վայրերից մեկը Խոսրովի արգելոցն է։ Այստեղ կարող եք տեսնել գեղատեսիլ ջրվեժներ, Հավուց Թառ և Աղջոց վանքերի ավերակները, «Քարերի սիմֆոնիա» բնության գեղատեսիլ հուշարձանը և շատ ավելին։ Արգելոցի մոտ կան մի քանի էկոտուրիզմի կենտրոններ։

Զբոսաշրջության տեսանկյունից բավական հետաքրքրություն են ներկայացնում պետական արգելոցները։ Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ պետական արգելոցը գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և/կամ հանրապետական նշանակություն ունեցող տարածք է, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության։

Այսպես՝ ամեն տարի Խոսրովի արգելոց են այցելում հազարավոր զբոսաշրջիկներ, որոնց, վայրի բնությունից բացի, հետաքրքրում է նաև Հավուց թառը, որ վանական համալիր է։ Կառուցվել է 8 կմ երկարությամբ ճանապարհ, որն արգելոցը կապում է այս համալիրի հետ՝ դառնալով տարածաշրջանի էկոզբոսաշրջության միակ երթուղին։ Այդ համատեքստում՝ անհրաժեշտ է կանխել արգելոցի տարածքում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանների՝ բնական գործոններով պայմանավորված աստիճանաբար քայքայումը և բարելավել դրանց վիճակը։

Այս արժեքների վերականգնումը թույլ կտա ապահովել ներդաշնակություն անցյալի մշակութային հուշարձանների և շրջակա միջավայրի միջև։

Արագ զարգացող զբոսաշրջության պայմաններում այս հուշարձանների օգտագործումը նպատակ ունի նաև լուծելու տարածքում որոշակի զբաղվածության, ենթակառուցվածքների ստեղծման խնդիրներ։

Էկոտուրիզմի մեկ այլ հետաքրքիր ուղղություններից Խոսրովի արգելոցում գտնվող հաջորդ էկոտուրիզմի կենտրոն Ուրցաձոր գյուղը։ Ուրցաձորն ունի նաև էկոկրթական կենտրոն, որտեղ տեղացիները կարող են մասնակցել հետաքրքիր էկոտուրիզմի դասընթացների։ Արդեն մի քանի տարի է, ինչ այստեղ անցկացվում են բնապահպանական միջոցառումներ, բնապահպանական դասընթացներ, տարածքի կանաչապատման, հյուրատների վերանորոգման և այլ գործողություններ, որոնց կարող են մասնակցել նաև զբոսաշրջիկները։ Ուրցաձորում գործում է երկու էկո տուն՝ «Ուրցաձորի էկո տունը» և «Ռեյնջեր կամպուսը»։ Նրանցից ոչ հեռու՝ Գնիշիկ գյուղում, կա մեկ այլ գողտրիկ վայր, որը կոչվում է «Գնիշիկ Էկո տուն»։ Այս երեք էկո-օթյակները

ապահովում են բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ, ինչպիսիք են արշավը և ձիավարությունը, բնապահպանական գործունեությունը, տնկարկները և այլն:

Ճանապարհորդները նախընտրում են մնալ փոքր հյուրանոցներում և հյուրատներում, երբեմն էլ մնալ գյուղաբնակների մոտ: Այս մոտեցումը թույլ է տալիս ճանապարհորդներին խորասուզվել տեղական կյանքի մեջ և ստանալ յուրահատուկ փորձ: Դրանցից մեկը Hye Landz Eco Village Resort-ն է: Էկոտուրիզմի այս կենտրոնում կան ընտանի կենդանիներ, որոնց զբոսաշրջիկները կարող են կերակրել: Այս էկո-հանգստավայրը գտնվում է Գեղադիր գյուղում և գյուղին տրամադրում է մի քանի արևային մարտկոցներ, որոնք նպաստում են նրա կայուն զարգացմանը:

Էկոտուրիստները միշտ փնտրում են ճանապարհորդական փորձառություններ, որոնք մոտ են բնությանը և տեղական համայնքին: Սա հենց այն է, ինչ դուք կարող եք գտնել Հայաստանում, և ինչը ձեզ կստիպի վերադառնալ այստեղ: Երկրի ներուժը էկոտուրիզմում շատ մեծ է, այն զարգանում է արագ տեմպերով՝ շրջանցելով տեսարժան վայրերի սովորական տուրերը:

Էկոտուրիզմն առանձնանում է նրանով, որ զբոսաշրջիկներին ծանոթացնում է ոչ թե Հայաստանի տեսարժան վայրերին, այլ բնությանը, առաջարկում է հանգստանալ գյուղերում՝ բնության նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքով հանգստի յուրահատուկ վայրերում, որտեղ օգտագործվում են միայն էկոլոգիապես մաքուր արտադրանք. բոլորը բնական և տնական: Էկոտուրիզմը կայուն ճանապարհորդական պրակտիկա է, որը նպաստում է պահպանվող տարածքների պահպանմանը՝ միաժամանակ օգուտ բերելով տեղական տնտեսությանը: Էկոտուրիզմը դարձել է զբոսաշրջության արդյունաբերության նշանակալի հատված: Էկո արձակուրդ պլանավորող մարդիկ կարող են ակնկալել ոչ միայն այցելել գեղեցիկ տեսարաններ՝ վայելելով բնական գեղեցկությունը, այլև իմանալ կենսաբազմազանությունը պաշտպանելու և տեղական մշակույթին ու տնտեսությանը աջակցելու դերի մասին:

Հայաստանի Հանրապետության էկոզբոսաշրջության զարգացման պլան

Հայաստանում էկոզբոսաշրջությունը գնալով ավելի ու ավելի է զարգանում, ինչը իհարկե դրականորեն է ազդում Հայաստանի Հանրապետության ընդհանուր զարգացման, նաև տնտեսության և այլ ճյուղերի բնագավառների զարգացման վրա: Սկսենք նրանից, որ երկրին հարկավոր են շատ զբոսաշրջիկներ, բայց պետք է հասկանանք, որ զբոսաշրջիկին գրավելու համար պետք է ստեղծենք բավարար և հարմար պայմաններ: Դրա համար առաջարկում եմ մարզերի գյուղերն օգտագործել որպես ռեսուրս, կընդգրկենք այն տարածքները, որտեղ բնությունն ընդգծված է (այսինքն՝ գեղեցիկ ու վայրի բնության առկայությունը, կենդանիների ագարակ և այլն), տվյալ վայրերում կառուցել էկո տնակներ, որը կլինի ոչ այդքան շքեղ, քանի որ էկոզբոսաշրջությունը չի նախատեսում շքեղ և բարձրակարգ հյուրանոցային պայմաններ, այն ոլորտի գերնպատակն է ընկերանալ բնության հետ ավելի մոտ լինելով նրան: Էկոտնակները իրենցից ներկայացնում են՝ փոքր, միջին չափսի փայտից տնակներ, որոնք կլինեն զբոսաշրջիկին հարմար պայմաններով: Գյուղի բնակիչները նույնպես կարող են տրամադրել զբոսաշրջիկին մեկ սենյակ, որտեղ էլ հենց գյուղացիները ցույց կտան իրենց ավանդույթները, ինչը շատ գրավիչ և հետաքրքիր կլինի զբոսաշրջիկների համար, քանի որ այդ կերպ կծանոթանա նաև երկրի ընդհանուր մշակույթին: Գյուղացուն կարող ենք առաջարկել, որպեսզի իր տունը դարձնի հյուրատուն, օգտագործելով բոլոր հարմար պայմանները, օրինակ՝ զբոսաշրջիկին ցույց տալ գյուղի գյուղատնտեսությունը, կյանքը, թե ինչպես է

գյուղացին պանիր պատրաստում, կենդանիներին խնամում, ծառերը ջրում, բերքահավաք անում և այլն, այդպիսով նաև զբոսաշրջիկին կծանոթացնենք Հայաստանի գյուղատնտեսության հետ: Գյուղացին կծանոթացնի նրանց տվյալ տարածաշրջանի խոհանոցի հետ, զբոսաշրջիկն էլ հենց կմասնակցի այդ ընթացքին՝ պատրաստելով գյուղաբնակ կանանց հետ:

Կարող ենք կազմակերպել արշավներ, որի ժամանակ գլխավոր գործունեությունը կլինի՝ աղբահավաքությունը, այս միջոցառումները ավելի շատ նախատեսված կլինեն տեղացիների համար, որ հենց իրենք սկսեն հոգ տանել այն երկրի համար, որտեղ ապրում են: Այսինքն ընդհանուր նախագծի նպատակն է՝ տեղի բնակիչներին ծանոթացնել Հայաստանի էկոզբոսաշրջության հետ, տարածքն ազատել աղբից, մաքրել ճանապարհները և սովորել հոգ տանել բնության մասին: Նախագիծը ավելի արդի դարձնելու համար կարող ենք գովազդել համացանցում, որի արդյունքում մարդիկ ավելի կտեղեկանան, կշահագրգրվեն ու կփորձեն մասնակցել տվյալ նախագծին: Կարելի է նաև կազմակերպել դասընթացներ/սեմինարներ կամ ճամբարներ էկոտուրզիմի վերաբերյալ, որպեսզի մարդկանց տեղեկացնենք ընդհանուր էկոտուրիզիմի մասին, Հայաստանի բնության, կենդանիների և առաջացած խնդիրների մասին, հասկանալ, թե ինչպես լուծել այդ խնդիրները: Պետք է սովորել խնայել ջուրը, գազը ու բացառապես ամեն ինչ, լինել ավելի խնայողաբար, որպեսզի հետո փաստի առաջ չկանգնենք մենք՝ բոլորս: Այս ամենը կօգնի գյուղերին զարգացնել իրենց գյուղատնտեսությունը, ինչի արդյունքում նաև կզարգանան զբոսաշրջության շատ այլ կարևոր ճյուղեր, ինչպիսիք են՝ ագրոզբոսաշրջությունը, կանաչ զբոսաշրջությունը, արկածային զբոսաշրջությունը, գաստրոզբոսաշրջությունը և այլն:

SWOT վերլուծություն

(S) Ուժեղ կողմ

Այս ոլորտն ունի շատ ուժեղ կողմեր, դրանք են.

1.Երկրում զարգացած էկո զբոսաշրջությունը կնպաստի Հայաստանի տնտեսության զարգացմանը:

2.Էկոզբոսաշրջության շնորհիվ կզարգանան շատ այլ ճյուղեր, ինչպիսիք են՝ ագրոզբոսաշրջությունը, կանաչ զբոսաշրջությունը, արկածային զբոսաշրջությունը, գաստրո զբոսաշրջությունը և այլն:

3.Զբոսաշրջային շատ վայրեր ու ընդհանուր բնությունը կազատվեն աղբից մի շարք նախագծեր գծելու և իրագործելու շնորհիվ:

4.Ճամբարների, սեմինարների կամ դասընթացների միջոցով մարդիկ ավելի տեղեկացված կլինեն էկոզբոսաշրջությանը:

5.Հայաստանի ֆլորան և ֆաունան կլինեն ապահովված, խնամված և գնահատված մարդկության կողմից:

6.Էկոզբոսաշրջության միջոցով ճանաչված կդառնան այն գյուղերը, որոնք նախկինում եղել են չճանաչված և անտեսված պետության կողմից: Պետությունը կսկսի ուշադրություն դարձնել տվյալ գյուղերին ֆինանսավորելով նրանց:

7.Շատ մարդիկ ձեռք կբերեն աշխատանք՝ մարդիկ, ովքեր չունեն մասնագիտական հատուկ կրթություն, կարող են լավ ռեսուրս հանդիսանալ տվյալ ոլորտի համար:

8.Կզարգանա նաև մարդկանց գիտամակարդակը՝ շփում ունենալով տարատեսակ զբոսաշրջիկների հետ:

9.Տեղի կունենա մշակութային զարգացում, որը կնպաստի նաև մշակութային զբոսաշրջությանը:

(W) Թույլ կողմեր

1.Համավարակի պատճառով կառաջանան խնդիրներ զբոսաշրջիկների ապրելավայրերի հետ կապված, քանի որ գյուղացիները կարող են չհամաձայնվել վարակվելու վախից ելնելով:
2.Պետությունը չունի բավարար ֆինանսներ տվյալ ոլորտը զարգացնելու համար:
3.Չունենք բարեկարգված ճանապարհներ:

(O) Հնարավորություններ

1.Հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչել բնությունն ու նրան ավելի մոտ լինել:
2.Բնությունը սիրող մարդիկ կլինեն երջանիկ, քանի որ կունենան հնարավորություն օգնել բնությանը՝ բնության մի մասը դառնալով:
3.Կլինի հնարավորություն ուսումնասիրել վայրի կենդանիներին, թռչուններին և բույսերին, ծանոթանալ էկզոտիկ/կարմիր գրքի տեսակներին:
4.Հայաստանը կունենա հնարավորություն էկոզբոսաշրջությունը զարգացնելու:
5.Զբոսավարի ապահովում:
6.Այս կերպ հնարավորություն կունենանք երկիրն ավելի ճանաչելի դարձնելու:

(T) Խոչընդոտներ

1.Գյուղացիների չհամաձայնությունը:
2.Կարող են խնդիրներ առաջանալ եղանակի հետ կապված, քանի որ չենք կարող կազմակերպել տարին 12 ամիս:
3.Մեծ խոչընդոտ կարող է հանդիսանալ համավարակների առաջացումը:
4.Խոչընդոտ են անսարք ճանապարհները, որոնք բարդացնում են ճանապարհի ընթացքը:

Գործնական աշխատանք

Որպես գործնական աշխատանք ուղևորվել ենք Վայոց ձորի Ելփին և Ռինդ գյուղերը՝ քայլարշավի և թռչնադիտարկման, որոնք հանդիսանում են էկոզբոսաշրջության երկու առանձին ճյուղեր: Գործնական աշխատանքի նպատակն է տեղեկանալ հարակից տարածքում գտնվող թռչունների մասին և հետևել նրանց կողմից կատարված գործողությունները:

Ելփին գյուղը գտնվում է Ելփին գետի ափին: Մարզկենտրոն Եղեգնաձորից հեռու է 26 կմ դեպի դեպի հյուսիս-արևմուտք, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 97 կմ:

Ռինդ գյուղը գտնվում է մարզկենտրոնից 25 կմ դեպի արևմուտք և Վարդենիսի լեռնաշղթայի Արփայի հովիտը իջնող լեզվակաձև սարվանդի վրա: Քայլարշավի տևողությունը 14 կիլոմետր էր և բավականին դժվարանցանելի: Թռչնադիտարկումը իրականացրել ենք հատուկ սարքավորումների՝ հեռադիտակների միջոցով, և դիտարկել ենք հարակից տարածքում գտնվող թռչուններին: Եվ որպես վերջնարդյունք ստորև ներկայացնում ենք թռչունների տեսակներին, որոնց դիտարկել ենք.

Սև ճայ

Ճայերի ընտանիքին պատկանող նստակյաց և քիչ տարածված թռչուն, որը գրանցված է Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում:

Սևագլուխ դրախտապան

Գեղանի կեցվածքով թռչուն է: Մարմնի երկարություն 16-17 սմ է, թևերի բացվածքը՝ 2630 սմ, կենդանի զանգվածը՝ 23-30 գրամ: Հասուն արուի գլուխը սև է, մարմինը վերևից՝ դարչնագույն-շիկակարմիր, թևերը՝ սևավուն, մարմինը ներքևից՝ դեղին: Էգի մարմինը վերևից դարչնագույն-մոխրագույն է, ներքևից՝ փոփոխական բաց դեղին: Երիտասարդն ավելի բաց գույնի է և խայտավոր, ներքնապոչը՝ բաց դեղին: Արուներն անընդմեջ երգում են՝ տեսանելի տեղում նստած: Բնակվում է բաց թփուտային տարածքներում՝ կիսաանապատներից մինչև ենթալպյան մարգագետիններ: Սնվում է անողնաշարավորներով, սերմերով: 1985 թվականից սկսած՝ նկատվում է թվաքանակի վտանգավոր անկում, ուստի անհրաժեշտ է անհատական պաշտպանության միջոցների կիրառում: Սևի ու դեղինի գեղեցիկ համադրությամբ փետրավորման շնորհիվ որոշակի գեղագիտական արժեք է ներկայացնում հատկապես անազատ պայմաններում:

Արտույտ

Ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիքից են: Հայտնի է 78, Հայաստանում՝ 8 տեսակ: Փոքր, 110-230 մմ երկարությանը, 15-70 գ կենդանի զանգվածով երգեցիկ թռչուններ են: Ունեն ամուր կառուցվածք, համեմատաբար մեծ գլուխ, կարճ ոտքեր (հարմարված են գետնին ազատ շարժվելուն): Հետին մատի եղունգն ուղիղ է և ավելի երկար մյուսներից: Փետրածածկը համեստ գույներով ու գուներանգներով է: Հիմնականում բաց տարածությունների թռչուններ են: Քուջի և կրծքի վրա հաճախ բծեր են լինում: Էգը և արուն արտաքինից չեն տարբերվում: Երգում են թռիչքի ընթացքում՝ թևերի ու պոչի բացվածքով ցուցադրում հարսանեկան խաղերի դրվագներ: Բնադրում են գետնին, դնում՝ 4-6 ձու, թխսակալում՝ 12-16 օր: Սնվում են միջատներով, մոլախոտերի, մշակաբույսերի, հացազգիների գետնին թափված սերմերով (ցողունի երկարության պատճառով հասկերը չեն կարողանում կտցել): Բնակվում են բաց տարածություններում, նոսրանտառներում, թփուտներում, անտառի բացատներում, հարթավայրերում, լեռներում:

Արծիվ

Ճուռակների ընտանիքին պատկանող գիշատիչ թռչուններ են: Աչքի են ընկնում լավ զարգացած մագիլներով, ինչը թույլ է տալիս որսալ մկնակերպ կրծողներից մինչև փոքր սմբակավորներ: Երբեմն նրանց անվանում եմ հիմա թռչուններ:

Եզրակացություն

Այս դիպլոմային նախագծի ընթացքում ձեռք բերված ինֆորմացիայի մանրակրկիտ ուսումնասիրությունից և ուսումնասիրելով Հայաստանի էկոզբոսաշրջությունը հասկացանք, որ տվյալ ոլորտը այստեղ այդքան էլ զարգացած չէ և ունենք շատ խնդիրներ, որոնց մասին չի բարձրաձայնվում, հետևաբար լուծումներ էլ չեն տրվում։

Ուսումնասիրելով, փորձեցինք տալ որոշակի լուծումներ, որոնք ըստ մեզ իրագործվելու դեպքում կունենան դրական ազդեցություն երկրի էկոզբոսաշրջության վրա։ Այս նյութում հավաքել և ներկայացրել ենք այն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները էկոզբոսաշրջության վերաբերյալ, որոնք հարկավոր էին զարգացման պլան գրելու համար։

Դիպլոմային նախագծի ընթացքում ուսումնասիրել ենք էկոզբոսաշրջության տեսակները, որոնցից են՝ քայլարշավները, քարանձավային տուրզիմը, վայրի բնության դիտարկումը (թռչնադիտարկում), ձիարշավը և այլն։ Այս ոլորտի տեսակները հետազոտելուց հետո անդրադարձել ենք առկա խնդիրներին, դրանք են՝ բնական և մշակութային ժառանգության պահպանության օժանդակումը, ազգաբնակչության էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացումը։

Էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության առավել արագ զարգացող ճյուղերից է, չի նախատեսում հարմարավետ հյուրանոցներ և բարձրակարգ սպասարկման ծառայություններ, իրականացվում է ավտոմեքենայով, հետիոտն, ձիով, վրանային և այլ միջոցներով։

Կազմել ենք նաև SWOT վերլուծություն, որի նպատակն էր հասկանալ հետևյալ ոլորտի ուժեղ, թույլ կողմերը, հնարավորություններն ու խոչընդոտները։ Գործնական հատվածում հետաքրքիր երթուղի ենք մշակել, որի ուղղությունն էր Վայոց ձորի մարզի՝ Ելփին և Ռինդ գյուղերը։ Նպատակն էր իրականացնել թռչնադիտարկում և քայլարշավ, որոնք հանդիսանում են էկոզբոսաշրջության երկու առանձին ճյուղեր։ Աշխատանքի ընթացքում ավելի լավ պատկերացում կազմեցինք տվյալ զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ։

Գրականության ցանկ

1. Ի՞նչ է էկոտուրիզմը Նյութի աղբյուրը՝ Econews.am 18.01.23
2. Էկո նորություններ eco.am 16.02.23
3. Ի՞նչ է Հայաստանն առաջարկում էկոտուրիզմի սիրահարներին armeniadiscovery.com 26.01.23
4. Էկոտուրիզմը Հայաստանում hetq.am 03.02.23
5. Էկոտուրիզմի լավագույն վայրերը Հայաստանում onewaytour.com 03.02.23
6. Հայաստանի էկոզբոսաշրջությունը armeniadiscovery.com 03.02.23
7. Էկոզբոսաշրջությունը Հայաստանում academia.edu 04.02.23
8. Լեռնագնացությունը Հայաստանում armalp.am 16.02.23
9. Ձիարշավներ Հայաստանում barevarmenia.ru 02.03.23
10. Էկոտուրիզմ armenia.travel 16.02.23
11. Էկոտուրզմը Հայաստանում: Ամենահետաքրքիր վայրերը azimuthtravel.am 17.02.23
12. Էկոտուրզմը Հայաստանում advantour.com 17.02.23
13. Էկոտուրզմը Հայաստանում: Ի՞նչ է էկոտուրիզմը armgeo.am 17.02.23
14. Էկոտուրիզմը Աֆրիկայում qmarikhovsepyanc.home.blog 12.03.23
15. Էկոտուրիզմը Ռուսաստանում anibarseghyanmskham.home.blog 19.03.23
16. Անհատական հեծանվային արշավներ Շիրակի մարզում bidfortrip.com 18.03.23
17. Հեծանվային արշավներ visitdebedcanyon.com 18.03.23
18. Թռչնադիտարկումը Հայաստանում fatbirder.com 05.05.23
19. Արավեսի կողմից անցկացված թռչունների հաշվարկ club300.se 05.05.23
20. Ուղղի դեպի Հայաստան voyagesstarling.be 06.06.23